Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-118-13.12.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «(բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի)» բառերը,

2) *4-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.*

«Սույն մասին համապատասխան վաղեմության վերջնաժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածում ներառված աշխատանքային օրերի քանակի չափով:»,

3) 5-րդ մասը եւ 6-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 6-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) եթե լրացել են սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետները.»:

Հոդված 2. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Բացառությամբ սույն հոդվածի 10.1-ին մասով սահմանված՝ հարկային պարտավորությունն ավելացնող եւ (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկների ներկայացման դեպքերի, հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել այն դեպքերում, եթե հարկային հաշվարկը վերաբերում է՝»,

2) 10-րդ մասի 3-րդ կետից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի» բառերը,

3) 10-րդ մասից հետո լրացնել հետեւյալ խմբագրությամբ 10.1-ին մաս.

«10.1. Անկախ սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված սահմանափակումներից՝ հարկային պարտավորությունն ավելացնող եւ (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկները (այդ թվում ճշտված հարկային հաշվարկները) ներկայացվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»,

4) 10-րդ մասի 2-րդ կետը եւ 11-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, ինչպես նաեւ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի վրա» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետի «ե.1» ենթակետում «ապրանքների» բառը փոխարինել «արտադրատեսակների» բառով եւ հանել «, բնաիրային» բառը,

2) 2-րդ կետում «վճարած հարկերի» բառերից հետո լրացնել «և վճարների» բառերը *և լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.*

«Սույն կետում նշված ցանկում չեն ներառվում Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և համայնքային կառավարչական հիմնարկները:»:

Հոդված 5. Օրենսգրքի 336-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետից հանել «: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ համարվում է, որ հարկ վճարողը Օրենսգրքի 65-րդ գլխով սահմանված կարգով հորիզոնական մոնիտորինգի համաձայնագրի գործողության ժամանակահատվածում ներառված չէ բարձր ռիսկայնության խմբում» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 398-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում *«հարկային իրավախախտում» բառերից առաջ լրացնել «հնարավոր» բառը,*

2) 2-րդ մասի 2-րդ և 3-րդ ենթակետերում «հարկային» բառից առաջ լրացնել «հնարավոր» բառը,

2) 3-րդ մասում «հարկային իրավախախտման փաստը» բառերը փոխարինել «հնարավոր հարկային *իրավախախտումը*» բառերով:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 65-րդ գլուխը:

Հոդված 8. *Օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «հարուցված՝» բառը փոխարինել «հարուցված վարչական վարույթի արդյունքում» բառերով:*

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող *երկրորդ ամսվա 1-ից*:

2. *Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:*

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի *2-րդ մասում նախատեսված կարգավորման գործողությունը տարածվում է* 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Առաջին ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-118-13.12.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «(բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի)» բառերը,

2) ~~4-րդ մասը~~4-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունն~~նախադասությամբ~~.

«Սույն մասին համապատասխան վաղեմության վերջնաժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածում ներառված աշխատանքային օրերի քանակի չափով:»,

3) 5-րդ մասը եւ 6-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 6-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) եթե լրացել են սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետները.»:

Հոդված 2. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Բացառությամբ սույն հոդվածի 10.1-ին մասով սահմանված՝ հարկային պարտավորությունն ավելացնող եւ (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկների ներկայացման դեպքերի, հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել այն դեպքերում, եթե հարկային հաշվարկը վերաբերում է՝»,

2) 10-րդ մասի 3-րդ կետից հանել «, բացառությամբ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի» բառերը,

3) 10-րդ մասից հետո լրացնել հետեւյալ խմբագրությամբ 10.1-ին մաս.

«10.1. Անկախ սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված սահմանափակումներից՝ հարկային պարտավորությունն ավելացնող եւ (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկները (այդ թվում ճշտված հարկային հաշվարկները) ներկայացվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»,

4) 10-րդ մասի 2-րդ կետը եւ 11-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, ինչպես նաեւ Օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի վրա» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետի «ե.1» ենթակետում «ապրանքների» բառը փոխարինել «արտադրատեսակների» բառով եւ հանել «, բնաիրային» բառը,

2) 2-րդ կետում «վճարած հարկերի» բառերից հետո լրացնել «և վճարների» բառերը և լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Սույն կետում նշված ցանկում չեն ներառվում Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և համայնքային կառավարչական հիմնարկները:»:

Հոդված 5. Օրենսգրքի 336-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետից հանել «: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ համարվում է, որ հարկ վճարողը Օրենսգրքի 65-րդ գլխով սահմանված կարգով հորիզոնական մոնիտորինգի համաձայնագրի գործողության ժամանակահատվածում ներառված չէ բարձր ռիսկայնության խմբում» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 398-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հարկային իրավախախտում~~ հայտնաբերելուց~~» ~~բառերը փոխարինել~~ բառերից առաջ լրացնել «հնարավոր~~ հարկային իրավախախտման ռիսկեր հայտնաբերելուց~~» ~~բառը բառերով~~,

2) 2-րդ մասի 2-րդ և 3-րդ ենթակետերում «հարկային» բառից առաջ լրացնել «հնարավոր» բառը,

~~2~~3) 3-րդ մասում «հարկային իրավախախտման փաստը» բառերը փոխարինել «հնարավոր հարկային ~~իրավախախտման ռիսկերը~~ իրավախախտումը» բառերով:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 65-րդ գլուխը:

Հոդված 8. Օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «հարուցված՝» բառը փոխարինել «հարուցված վարչական վարույթի արդյունքում» բառերով:

Հոդված ~~8~~9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից~~տասներորդ օրը~~:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում: ~~Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:~~

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված կարգավորման գործողությունը տարածվում է ~~2-րդ կետը տարածվում է~~ 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-118-13.12.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությու-ն-ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «4-րդ մասը» բառերը փոխարինել «4-րդ մասում» բառերով, իսկ «նախադասությամբ»՝ բառը «նախադասություն» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	Առաջարկում ենք ՀՀ հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածում կատարվող փոփոխությունների շարքում լրացնել նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերում ՀՀ պետական մարմինները և համայնքային կառավարչական հիմնարկները չներառելու կարգավորումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3"	ՀՀ կառավարություն	**Հոդված 6**	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի	Ընդունվել է: Նախագծի 6-րդ	Ընդունվել է:

			398-րդ հոդվածի 1-ին մասում «հարկային իրավախախտում հայտնաբերելուց» բառերը փոխարինել «հնարավոր հարկային իրավախախտման ռիսկեր հայտնաբերելուց» բառերով՝ արդյունքում նախատեսելով, որ՝ *հարկային վարչարարության իրականացման ընթացքում* ***հնարավոր հարկային իրավախախտման ռիսկեր հայտնաբերելուց*** *անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային իրավախախտումները բացահայտվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվառման արդյունքում:* Այս առումով անդրադառնալով Նախագծի 6-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածում կատարվող փոփոխությանը՝ հարկ ենք համարում նշել, որ այն իրավական որոշակիության սկզբունքի պահանջների պահպանման տեսանկյունից խնդրահարույց է, մասնավորապես՝	հոդվածում «հնարավոր հարկային իրավախախտման ռիսկեր» ձևակերպումը խմբագրվել է:	

			Նախագծով օգտագործվում է **«հնարավոր հարկային իրավախախտման ռիսկեր»** հասկացությունը, մինչդեռ վերջինիս բովանդակությունը ոչ Օրենսգրքով, ոչ Նախագծով բացահայտված չէ: Բացի այդ, տվյալ պարագայում հարկ ենք համարում նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 76-րդ գլուխն ամբողջությամբ, այդ թվում՝ Նախագծով փոփոխվող 398-րդ հոդվածը (ըստ հոդվածի վերնագրի) վերաբերվում է ***հարկային իրավախախտմանը***, որի բովանդակությունը բացահայտված է նույն օրենսգրքի 397-րդ հոդվածում:		
			Նախագծի 6-րդ հոդվածով օրենսգրքի 398-րդ հոդվածում նախատեսված փոփոխություններին համապատասխան՝ առաջարկում ենք փոփոխություն նախատեսել օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ արձանագրության մեջ ներառվող տվյալներում:	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածում լրացվել է նոր մաս, որի համաձայն՝ օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ ենթակետերում «հարկային» բառից առաջ կլրացվի «հնարավոր» բառը:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	**Հոդված 8**	Օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սահմանված նախորդ հարկային տարին ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կորստի դեպքում որոշվում է՝ որպես ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները կորած համարվելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումի (գրության) հիման վրա հարուցված՝ հարկային մարմնի ղեկավարի լիազորած ստորաբաժանման ղեկավարի ընդունած վարչական ակտի կազմման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարի: Հաշվի առնելով այն, որ վարչական ակտն ընդունվում է դիմումի (գրության) հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում, առաջարկում ենք «հարուցված՝» բառը փոխարինել «հարուցված վարչական վարույթի արդյունքում» բառերով:	Նախագիծը լրացվել է նոր հոդվածով, որի համաձայն՝ օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «հարուցված՝» բառն առաջարկվում է փոխարինել «հարուցված վարչական վարույթի արդյունքում» բառերով:	
5	ՀՀ կառավարություն	**Հոդված 9-ի 1-ին մաս**	Առաջարկում ենք որպես օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	**Հոդված 9-ի 2-րդ մաս**	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սույն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:» բառերով:		
7	ՀՀ կառավարություն	**Հոդված 9-ի 2-րդ մաս**	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «2-րդ կետը տարածվում է» բառերն առաջարկում ենք փոխարինել «2-րդ մասում նախատեսված կարգավորման գործողությունը տարածվում է» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: